



**ԱՌԱՃՆԵՐԸ ԵՎ ԱՍԱԳՎԱԾՔՆԵՐԸ ԻՍՊԱՆԵՐՆԵՆԻ՝
ՈՐՊԵՏ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ՌԻՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ***

ՅՏԴ 372.881.1

DOI: 10.52063/25792652-2021.2-240

ՀԱՍՄԻԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

*Երևանի պետական համալսարանի եվրոպական լեզուների և
հաղորդակցության ֆակուլտետի ռոմանական
բանասիրության ամբիոնի վարիչ,
բանասիրական գիտությունների դոկտոր, դոցենտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
h.baghdasaryan@ysu.am*

Սույն հոդվածի նպատակն է քննել առաձևերի ու ասացվածքների դերը իսպաներենի՝ որպես օտար լեզվի դասավանդման գործընթացում: Իսպանական առաձաքանության դիդակտիկայում կարևոր դեր է խաղում Սերվանտեսի «Դոն Կիխոտ» վեպը, որը կարելի է դիտարկել որպես գրական առաձանի: Հիմնվելով այս վեպի խրատական ասույթների քննության վրա՝ հոդվածում առաջարկվում են մի շարք գործնական առաջադրանքներ, որոնք կարելի է իրականացնել իսպաներենի ուսուցման ընթացքում: Այս խնդրում կարևորվում է նաև համատեքստի դերը, քանի որ առաձևերի ու ասացվածքների գործաբանական ներուժը՝ որպես իրադրային կլիշեներ, առավել ցայտուն ձևով բացահայտվում է հաղորդակցական գործընթացում:

Հետապոտությունն իրականացվել է ինչպես ճանաչողության համընդհանուր գիտական մեթոդների, այնպես էլ գիտամանկավարժական հետապոտությունների տարբեր սկզբունքների հիման վրա, որոնք բխում են քննարկվող նյութի առանձնահատկություններից:

Խնդրի ամփոփ քննությունը թույլ է տալիս երակացնել, որ «Դոն Կիխոտ» վեպի առաձևերի ու ասացվածքների ներգրավումը իսպաներենի՝ որպես օտար լեզվի դասընթացում կարող է մեծ դեր խաղալ ուսանողների լեզվաբանական, հանրամշակութային իրապեկությունների, ինչպես նաև թարգմանական կարողությունների ու հմտությունների ձևավորման ու վարզացման գործում:

Հիմնաբառեր՝ առաձ և ասացվածք, իսպաներեն, ուսուցման գործընթաց, դիդակտիկա, առաջադրանքներ, լեզվաբանական իրապեկություն, հանրամշակութային իրապեկություն, թարգմանական կարողություններ:

Ներածություն

Առաձներն ու ասացվածքները յուրաքանչյուր մշակույթի անբակտելի մասն են կազմում, որոնցում վառ ձևով դրսևորվում են տվյալ ժողովրդի լեզվամտածողության առանձնահատկությունները: Այս խրատական ասույթները հաճախ դիտարկվում են

* Հոդվածը ներկայացվել է 16.05.2021թ., գրախոսվել՝ 24.06.2021թ., տպագրության ընդունվել՝ 30.06.2021թ.:

որպես «գեղարվեստական մանրանկարներ» (Գ. Պերմյակով) կամ էլ «փոքրիկ կտակարաններ» (ինչպես ընդունված է իսպանական առածաբանության մեջ՝ *Los dichos de los viejitos, son evangelios chiquitos; Los refranes antiguos, evangelios chicos*) և սերնդեսերունդ փոխանցում են ժողովրդի դարավոր իմաստությունը, նրա բարոյագիտական ընկալումները, վարքուբարքի կանոնները, գեղեցիկի ու վեհի մասին գեղագիտական պատկերացումները: Լինելով պատկերավոր ու սեղմ արտահայտություններ՝ այս լեզվական միավորները բովանդակային առումով բազմաշերտ են և խտացնում են տվյալ լեզվական համայնքի պատմամշակութային փորձն ու կենսափիլիսոփայությունը: Առածների ու ասացվածքների բարոյախրատական բնույթի մասին են վկայում մի շարք ասույթներ, որոնք փաստում են նաև, որ վերջիններս ունեն տարածամանակային բնույթ և արտահայտում են «հավերժական» ճշմարտություններ. *No hay refrán que no sea verdadero; Refranes que no sean verdaderos y febreros que no sean locos, pocos; Tantos refranes, tantas verdades; Refrán viejo, nunca mente* և այլն:

Սույն հոդվածի նպատակն է քննել իսպաներենի՝ որպես օտար լեզվի դասընթացին առածների ու ասացվածքների ուսուցման մի քանի խնդիրներ: Տրամաբանական կուռ կառուցվածքի, բարեհնչունության, ուրույն պատկերավորության ու հուզականության, ինչպես նաև ռիթմաշարահյուսական ու կառուցվածքային առանձնահատկությունների, լեզվաոճական հնարների բազմազանության շնորհիվ այս ասույթները կարևոր տեղ են զբաղեցնում մայրենի և օտար լեզուների ուսուցման տարբեր փուլերում:

Առածներն ու ասացվածքները խրատական բնույթի բարդ, հաղորդակցական լեզվական միավորներ են, որոնց սահմանման խնդրում առկա են տարբեր մոտեցումներ: Թեև առածների ու ասացվածքների սահմանման և հարակից հասկացություններից սահմանազատման հարցում դեռևս չկա միասնական կարծիք, այնուամենայնիվ այս խնդրում կարելի է առանձնացնել մի շարք հիմնարար աշխատություններ (Назарян; Пермяков; Sevilla y Cantera և այլն): Ի տարբերություն հաղորդակցական արժեք ունեցող դարձվածքների՝ առածներն ու ասացվածքներն ունեն բարոյախոսական, դիդակտիկ բնույթ և ուսուցանում են վարվելակերպի որոշ կանոններ: Այսպես օրինակ՝ համեմատելք հետևյալ զուգահեռ համարժեքները ռոմանական մի քանի լեզուներում, որոնց առանցքային թեման *համակերպման* գաղափարն է. *խսպ*. *A falta de pan, buenas son tortas; A falta de caldo, buena es la carne; A falta de polla, pan y cebolla, \$p. Faute de grives, on mange des merles; À défaut de pain on mange des croûtes, \$un. Chi non può avere la carne, beva il brodo; Bisogna accontentarsi di ciò che Dio manda: Առածների և ասացվածքների վերաբերյալ որևէ իրադրություն է, սակայն ոչ թե կոնկրետ իրադրություն, այլ նմանատիպ իրադրությունների մի դաս:*

Առածների ու ասացվածքների դերը իսպաներենի ուսուցման գործընթացում

Իսպանագիտական աղբյուրներում առածներն ու ասացվածքները վերջին տասնամյակներին դարձել են լայն քննարկման առարկա (Խ. Սևիլյա Մուլյոս, Խ. Կանտերա Օրտիս դե Ուրբինա, Մ. Բարբադիյո դե լա Ֆուենտե, Մ. Սուրդո Ռուիս-Այուկար և այլք), որտեղ առանձնահատուկ ուշադրության կենտրոնում են նաև առածաբանության *դիդակտիկայի* խնդիրները: Այս առումով, իսպաներենի՝ որպես օտար լեզվի դասավանդման գործընթացում կարելի է առանձնացնել երկու մոտեցում. առաջին դեպքում նպատակահարմար է համարվում առածների ու ասացվածքների ուսուցումը իսպաներենի իմացության միջին ու բարձր մակարդակներում, մինչդեռ երկրորդ մոտեցման դեպքում կարևորվում է առածների ու ասացվածքների ներգրավումն ուսուցման հենց առաջին շրջանում՝ սկսելով նվազ հատկաբանական բնույթ ունեցող ասույթներից, այնուհետև աստիճանաբար անցնելով այն ասույթներին, որոնցում լեզվամշակութային տարրերն ավելի վառ են դրսևորվում (Sardelli 327): Այնուամենայնիվ, ակնհայտ է առածների ու ասացվածքների նվազ ներգրավվածությունն իսպաներենի՝

որպես օտար լեզվի դասավանդման արդի տարբեր դասագրքերում (օրինակ՝ Prisma, Gente, A fondo, Método de español para extranjeros և այլն)՝ ի տարբերություն դարձվածքների, որոնք մեծ չափով ընդգրկված են տարբեր դասագրքերում: Արժևորելով այս խրատական ասույթների լայն կիրառությունը դասավանդման բարձր մակարդակներում՝ պետք է նշել, որ դրանք կարող են նաև արդյունավետ ձևով գործածվել ուսուցման ցածր մակարդակներում՝ ուսանողների արտասանական ու ռիթմահնչերանգային հմտությունների կատարելագործման, բառապաշարի հարստացման, խոսքի քերականական իմացության խթանման նպատակով (օրինակ՝ անվանների համեմատության աստիճանները և այլ քերականական երևույթներ յուրացնելիս), կարող են ծառայել որպես մի ընդհանուր թեմայի վերնագիր կամ պարզապես լուսաբանող նյութ՝ հաղորդակցական տարբեր նպատակներով:

Իսպանագիտական աղբյուրներում առաջադրված առածաբանական *մինիմումը* (mínimo paremiológico)¹ արդյունավետ գործիք է ուսուցման տարբեր մակարդակներում խրատական ասույթներն ընդգրկելու համար՝ հաշվի առնելով սոցիալ-մշակութային, աշխարհագրական տարբեր գործոններ, ինչպես նաև ուսուցման հիմնական նպատակները (Zurdo y Sevilla 62): Մ. Բարբադիլյոն առաջարկում է «Դոն Կիխոտ» վեպից քաղված առածների ու ասացվածքների նվազագույն քանակ, որը կարելի է կիրառել իսպաներենի՝ որպես օտար լեզվի դասընթացում: Խոսքն արդի իսպաներենում լայն գործածություն ունեցող այն առածների մասին է, որոնք առավել ցայտուն ձևով ներկայացնում են իսպանական լեզվամշակույթի առանձնահատկությունները (Barbadillo, *Modelo de contribución*):

Առածների ու ասացվածքների իմաստային բովանդակությունն առանձնանում է իր բազմահայեցակերպային բնույթով, որն էլ օտար լեզվի դասավանդման մեջ այս խրատական ասույթներն արդյունավետ ձևով օգտագործելու մեծ հնարավորություններ է ընձեռում: Նախ և առաջ հարկ է անդրադառնալ համապատասխան ուսումնական նյութի ընտրության խնդրին՝ նկատի ունենալով այս լեզվամշակութային միավորների ձևական-իմաստային և գործառական առանձնահատկությունները:

Առածներն ու ասացվածքներն իսպաներենի դասընթացում կարելի է ներգրավել դասական կամ ժամանակակից գրականությունից քաղված հատվածների միջոցով: Այս առումով առաջին հերթին անհրաժեշտ է հիշատակել Սերվանտեսի «Դոն Կիխոտ» վեպը, որն իրավամբ համարվում է *գրական առածանի*: Հաշվի առնելով առածային ասույթների սահմանազատման հարցում արդի առածաբանության մեջ առկա տարածայնությունները՝ այս վեպում կարելի է առանձնացնել 330 առած և 45 առածային ասույթ (frase proverbial), որոնք վեպի գեղարվեստական հյուսվածքում կատարում են տարբեր գործառույթներ՝ դիդակտիկ, փաստարկման, վեպի գործող անձանց բնութագրման, երգիծական, խաղային, հորդորական և այլն (Cantera *et al.*): Առածների ու ասացվածքների ուսուցման համար հարուստ նյութ են ծառայում նաև Սերվանտեսի «խրատական նովելները»: Այս երկու ստեղծագործություններում ընդգրկված խրատական մի շարք ասույթներ պահպանել են իրենց կենսունակությունն արդի իսպաներենում և առանձնանում են գործածության մեծ հաճախականությամբ գրական-գեղարվեստական տարբեր ստեղծագործություններում, մամուլի լեզվում, առօրյա խոսքում և այլն:

Իսպաներենի դասընթացին առածների ու ասացվածքների ուսուցման նպատակով ներկայացնենք Սերվանտեսի վերոհիշյալ վեպերից քաղված մի քանի ցուցադրական օրինակներ և քննենք այն գործնական առաջադրանքները, որոնք հնարավոր է իրագործել լսարանում:

¹ Խոսքն առածների այն նվազագույն քանակի մասին է, որին պետք է ծանոթ լինի լեզվակիրը:

Սերվանտեսի «Դոն Կիխոտ»-ը համաշխարհային գրականության գլուխգործոցներից է, որն առանձնանում է լեզվական արտահայտչամիջոցների բազմազանությամբ ու հարստությամբ, տարաբնույթ թեմաների լայն ընդգրկմամբ: Ինչպես այլ լեզվական երևույթների, այնպես էլ առածների և ասացվածքների էությունն ավելի վառ ձևով դրսևորվում է խոսքում դրանց գործառնության առանձնահատկությունները քննելիս: Վերջիններիս գործառնական-իմաստային ծանրաբեռնվածության բնույթը կախված է նաև համատեքստի հետ ունեցած կապերից: Վեպում առածներն ու ասացվածքները հատկապես ի հայտ են գալիս երկխոսություններում՝ ի ցույց դնելով բանավոր ավանդույթների հետ դրանց սերտ առնչությունները: Վեպի որոշ հատվածներում առկա են առածների ու ասացվածքների «շարաններ», ինչպես օրինակ՝ վեպի երկրորդ հատորի յոթերորդ գլխում Սանչոյի և դոն Կիխոտի երկխոսության մեջ.

–Teresa dice –dijo Sancho– que ate bien mi dedo con vuestra merced, y que hablen cartas y callen barbas, porque quien destaja no baraja, pues más vale un toma que dos te dará. Y yo digo que *el consejo de la mujer es poco, y el que no lo toma es loco.*

–Y yo lo digo también –respondió don Quijote–. Decid, Sancho amigo; pasad adelante, que habláis hoy de perlas (Don Quijote, Tomo II:47).

Վեպի նույն գլխում կարող ենք առանձնացնել նաև հետևյալ հատվածը, որում Սանչոն ցանկանում է պարզել, թե ինչքան է վաստակում: Այստեղ հաջորդաբար ի հայտ են գալիս երեք առած. «En fin, yo quiero saber lo que gano, poco o mucho que sea; que *sobre un huevo pone la gallina, y muchos pocos hacen un mucho, y mientras se gana algo no se pierde nada*» (Don Quijote, Tomo II:47): Առածները և ասացվածքները, որոնք աչքի են ընկնում գործաբանական մեծ ներունակությամբ, նման դեպքերում կատարում են տարբեր գործառնություններ և հանդես են գալիս որպես փաստարկման, հորդորման, հուզարտահայտչական ներգործման միջոց և այլն:

Երկրորդ հատորի 43-րդ գլուխը («Խրատների երկրորդ մասը, որ դոն Կիխոտը տվեց Սանչո Պանսային») աչքի է ընկնում առածների գործածության այնպիսի հաճախականությամբ, որ այն կարելի է դիտարկել որպես «ժողովրդական» առածանի: Այստեղ Սերվանտեսը գործածել է 25 առած, որոնք առանձնանում են ոչ միայն ուսուցողական-դիդակտիկ բնույթով, այլ նաև առածների էության վերաբերյալ դոն Կիխոտի մեկնաբանություններով՝ շեշտադրելով դրանց ճիշտ ու տեղին գործածության անհրաժեշտությունը.

[...] mas yo tendré cuenta de aquí adelante de decir los que convengan a la gravedad de mi cargo; que *en casa llena, presto se guisa la cena; y quien destaja, no baraja; y a buen salvo está el que replica; y el dar y el tener, seso ha menester.*

–¡Eso sí, Sancho! –dijo don Quijote–. ¡Encaja, ensarta, enhila refranes; que nadie te va a la mano! ¡*Castígame mi madre y yo trómpogelas!* Estoy te diciendo que excuses refranes, y en un instante has echado aquí una letanía de ellos, que así cuadran con lo que vamos tratando como por los cerros de Úbeda. Mira, Sancho, no te digo yo que parece mal un refrán traído a propósito; pero cargar y ensartar refranes a troche y moche, hace la plática desmayada y baja (Don Quijote, Tomo II:240).

Իսպաներենի՝ որպես օտար լեզվի դասընթացին առածների ու ասացվածքների դիդակտիկ գործառնության անգերազանցելի օրինակներ է պարունակում նաև նույն գլխից քաղված հետևյալ հատվածը: Առաջին օրինակում Սանչոն, լսելով դոն Կիխոտի խորհուրդները, պատասխան խոսքում երեքական «շարաններով» առածներ է օգտագործում.

– [...] cuanto más que fingiré que tengo tullida la mano derecha, y haré que firme otro por mí; que *para todo hay remedio, si no es para la muerte; y teniendo yo el mando y el palo*, haré lo que quisiere; cuanto más que *el que tiene el padre alcalde...* Y siendo yo gobernador, que es más que ser alcalde, ¡llegaos, que la dejan ver! No, sino popen y calúmnienme; que *vendrán por lana y volverán trasquilados; y a quien Dios quiere bien, la casa le sabe; y las necesidades del rico por sentencias pasan en el mundo*, y siéndolo yo, siendo gobernador y juntamente liberal, como lo pienso ser, no habrá falta que se me parezca. No, sino *haceos miel y paparos han moscas; tanto vales cuanto tienes*, decía una mi abuela; y *del hombre arraigado no te verás vengado* (Don Quijote, Tomo II:241).

Այս հատվածում առածների երկրորդ շարանն աչքի է ընկնում նաև բազմաշաղկապայնությամբ, որում և շաղկապի կրկնություններն ընդգծում են Սանչոյի խոսքի հուզական բնույթը: Դրն Կիխոտը նույնպես օգտագործում է մի շարք առած-ասացվածքներ, սակայն վեպում առածների մեծ մասը հայտնվում է Սանչոյի խոսքում: Թեև Սանչոն միայն իր անունը գրել գիտեր, վեպում նա հանդես է գալիս որպես ժողովրդական ավանդույթների և սովորույթների կրող, որի խոսքում բյուրեղանում է ժողովրդական ողջ իմաստությունը: Տարբեր դիդակտիկ նպատակներով կարելի է օգտագործել նաև «Դրն Կիխոտ»-ի մի շարք այլ առածներ, որոնք այս վեպի հրատարակությունից հինգ դար անց չեն կորցրել կենսունակությունն ու արդիականությունը, ինչպես օրինակ՝ *Una golondrina no hace verano; Cada oveja con su pareja; Cada uno es hijo de sus obras; Cuando Dios amanece, para todos amanece; Cuando a Roma fueres, haz como vieres; A buen entendedor, pocas palabras; De la abundancia del corazón habla la lengua; Donde menos se piensa salta la liebre; El que ve la mota en el ojo ajeno, vea la viga en el suyo; Hoy por ti y mañana por mí; La ocasión la pintan calva* և այլն:

Առածների ու ասացվածքների ուսուցողական-դիդակտիկ գործառնությունների քննության հրաշալի հնարավորություններ են ընձեռում նաև Սերվանտեսի «հյրատական նովելները»: Այս ստեղծագործության մեջ ընդգրկված յուրաքանչյուր նովել կարող է դառնալ առանձին քննության առարկա: Այսպես օրինակ՝ «Ռինկոնետե և Կորտադիլյո» նովելում կարելի է առանձնացնել քսանչորս խրատական ասույթներ (առածներ, ասացվածքներ, սերվանտեսյան ասույթներ) և ուսուցողական-դիդակտիկ տարբեր նպատակներով օգտագործել իսպաներենի՝ որպես օտար լեզվի ուսուցման գործընթացում: Այս նովելում գործածության հաճախականությամբ ու արտահայտչականությամբ հատկապես առանձնանում են հետևյալ առած-ասացվածքները՝ *A lo que se quiere bien se castiga* (80), *Para todo hay remedio, si no es para la muerte* (30), *Buena diligencia es madre de la buena ventura* (30-32), *No se mueve la hoja sin la voluntad de Dios* (112), *Tras este tiempo vendrá otro* (110), *Donde las dan las toman* (30) և այլն: Ինչպես «Դրն Կիխոտ» վեպում, այս նովելում նույնպես կան այնպիսի հատվածներ, որոնք աչքի են ընկնում առած-ասացվածքների *շարան-շարան* գործածությամբ՝ ի ցույց դնելով Սերվանտեսի անհատական ոճի որոշ առանձնահատկությունները.

«Lo mismo digo yo» dijo Cortado «pero *para todo hay remedio, si no es para la muerte*, y el que vuesa merced podrá tomar es, lo primero y principal, tener paciencia; que *de menos nos hizo Dios y un día viene tras otro día, y donde las dan las toman*; y podría ser que, con el tiempo, el que llevó la bolsa se viniese a arrepentir y se la volviese a vuesa merced sahumada.» (Rinconete y Cortadillo, 30)

Ուսուցողական տարբեր նպատակներով ներկայացնելով Սերվանտեսի ստեղծագործություններից քաղված առածաբանական կորպուսի մի քանի ցուցադրական նմուշներ՝ ստորև ներկայացնենք որոշ գործնական առաջադրանքներ,

որոնք կարելի է իրականացնել իսպաներենի դասընթացին՝ ուսանողների գրավոր ու բանավոր խոսքի զարգացման համար: Հարկ է նշել նաև, որ Մ. Բարբադիլոյո դե լա Ֆուենտեն առաջարկում է «Դոն Կիխոտ» վեպի առաձևերը ու ասացվածքներն իսպաներենի դասընթացին օգտագործելու համար մի շարք արժեքավոր ելակետային դրույթներ (*Barbadillo, Presupuestos didácticos*).

- կատարել առաձևերի ու ասացվածքների թեմատիկ դասակարգում՝ առանձնացնելով այն առանցքային բառերը, որոնք արտահայտում են իրատական ասույթի հիմնական իմաստը,
- քննել առաձևերի ու ասացվածքների կառուցվածքային կաղապարների յուրահատկությունները իսպաներեն-հայերեն համեմատական պլանում,
- քննել առաձևերի ու ասացվածքների հնչյունական, ձևաբանական-շարահյուսական, բառաիմաստային ու ոճական առանձնահատկությունները,
- քննել համատեքստի դերը առաձևերի ու ասացվածքների տվյալ իմաստի բացահայտման խնդրում, վեր հանել տվյալ համատեքստում առաձևերի ու ասացվածքների հուզարտահայտչական և ոճական-գնահատողական հարանշանակությունները,
- տարբերակել առաձևերի ու ասացվածքների հիմնական գործառույթները տվյալ հաղորդակցական իրադրության մեջ,
- առաձևերի ու ասացվածքների հիմնական իմաստները փոխկապակցել ստեղծագործության տվյալ հատվածի գաղափարական, սոցիալ-մշակութային և այլ հայեցակերպերի հետ,
- ուսանողների քննավերլուծական ունակությունները զարգացնելու նպատակով քննարկումներ ու բանավեճեր ծավալել առաձային իմաստի շուրջ, արտահայտել համաձայնություն կամ անհամաձայնություն տվյալ ասույթում ամփոփված բարոյախոսության վերաբերյալ,
- առաջարկել առաձևերի ու ասացվածքների գործածության այլ իրադրություններ՝ զարգացնելով ուսանողների ստեղծագործական երևակայությունն ու պատկերավոր մտածողությունը,
- գտնել տվյալ փոքրիկ պատմվածքի գլխավոր միտքն ամփոփող որևէ առած կամ ասացվածք,
- գտնել առաձային ասույթներ, որոնք կարող են օգտագործվել տվյալ իրադրության մեջ,
- առաջարկել տվյալ առաձևերի հայերեն համարժեքները՝ վեր հանելով երկու լեզուներում առաձային ասույթների իմաստային ու լեզվաոճական առանձնահատկությունները,
- զուգահեռ համարժեքների բացակայության դեպքում փնտրել գործառական համաբանություններ,
- վեր հանել համընդհանուրն ու ազգայինը տվյալ առաձային-իմաստային դաշտում իսպանական և հայ լեզվամշակույթների դիտանկյունից:

Այս առաջադրանքները կատարելու համար նախ և առաջ անհրաժեշտ է, որ ուսանողը ծանոթ լինի առածի բնորոշմանը և կարողանա այն սահմանազատել հարակից հասկացություններից: Սերվանտեսը «Դոն Կիխոտ»-ում առաջարկում է առածի հետևյալ բնութագրումները, որոնք արդիական են նաև այսօր: Ըստ էության, Սերվանտեսը ոչ միայն առաձևերի մեծ զիտակ էր, այլ նաև գրական տեքստում ներկայացրել է առածի էության բացահայտման կարևոր մոտեցումները:

—Paréceme, Sancho, que no hay refrán que no sea verdadero, porque todas son sentencias sacadas de la misma experiencia, madre de las ciencias todas, especialmente aquel que dice: «Donde una puerta se cierra, otra se abre». (Don Quijote, Tomo I:143-144)

Hay un refrán en nuestra España, a mi parecer muy verdadero, como todos lo son, por ser sentencias breves sacadas de la luenga y discreta experiencia; (Don Quijote, Tomo I:301)

[...] te he dicho que los refranes son sentencias breves, sacadas de la experiencia y especulación de nuestros antiguos sabios; y el refrán que no viene a propósito antes es disparate que sentencia. (Don Quijote, Tomo II:376)

Իսպաներենի՝ որպես օտար լեզվի ուսուցման գործընթացում առաձային ասությունները կարևոր դեր են խաղում տարբեր իրազեկությունների կատարելագործման խնդրում: «Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ»-ում այս խնդրին հատուկ անդրադարձ է կատարվում «Լեզվի հաղորդակցական իրազեկությունները» բաժնում, որտեղ առանձնացվում են հաղորդակցական իրազեկության հետևյալ բաղադրիչները՝ լեզվաբանական, հանրալեզվաբանական ու գործաբանական կարողությունները: Լեզվաբանական իրազեկությունների մեջ տարբերակելով մի քանի տեսակներ՝ բառապաշարային, քերականական, իմաստային, հնչյունական, ուղղագրական և ուղղախոսական, առաձներն ու ասացվածքները հատկապես կարևորվում են բառապաշարային իրազեկությունների ընդլայնման մեջ (MCER 108): Դրա հետ մեկտեղ հատկանշական է առաձների ու ասացվածքների դերը լեզվի պատկերավորման տարբեր միջոցների (դարձույթներ, բանադարձումներ և այլն) ուսուցման գործում:

«Դոն Կիխոտ» վեպի մի շարք առաձներ հնչյունական-ռիթմային, հնչերանգային-շարահյուսական հարստությամբ և իմաստային տարբեր երանգների բազմազանությամբ կարող են ծառայել որպես արդյունավետ միջոց հնչյունական, ուղղախոսական, քերականական, իմաստային և այլ իրազեկությունների զարգացման մեջ: Այսպես օրինակ՝ նպատակահարմար և արդյունավետ է «Դոն Կիխոտ» վեպից քաղված մի շարք առաձների օգտագործումը իսպաներենի քերականական տարբեր ձևերի ու կառույցների յուրացման, ինչպես նաև գործածության հմտությունների խթանման համար: Օրինակ՝ հող, գոյականի սեռը և թիվը՝ *Dios que da la llaga da la medicina; La codicia rompe el saco; Un abismo llama a otro y un pecado a otro pecado; De noche todos los gatos son pardos; No todos los tiempos son unos*, ածականների համեմատության աստիճանները՝ *Más vale el buen nombre que las muchas riquezas; Más vale pájaro en mano que buitre volando; Más vale un toma que dos te daré*, դերբայ, մակբայական դերբայ՝ *A dineros pagados, brazos quebrados; A Dios rogando y con el mazo dando*, հրամայական եղանակ՝ *Al hijo de tu vecino, límpiale las narices y métele en tu casa; No os metáis donde no os llaman; Cuando viene el bien, métele en tu casa; Haz lo que tu amo te manda, y siéntate con él a la mesa; Júntate a los buenos, y serás uno de ellos*, ըղձական եղանակ՝ *No hay padre ni madre a quien sus hijos parezcan feos; No hay libro tan malo que no tenga algo bueno; No querría que fuese por lana y volviese trasquilado; ¡Ándeme yo caliente, y riase la gente!; No hay camino tan llano que no tenga algún tropezón o barranco*, նախադասության տարբեր տիպեր՝ *El hombre pone y Dios dispone; Ojos que no ven, corazón que no quiebra; Aunque la traición aplace, el traidor se aborrece; Bien predica quien bien vive; Cuando Dios amanece, para todos amanece; Dime con quién andas, decirte he quién eres* և այլն:

Այնուամենայնիվ, առաձներն ու ասացվածքները, որպես հաղորդակցական արդյունավետ գործիք, ավելի մեծ դեր են խաղում հանրալեզվաբանական իրազեկությունների (կարողությունների) ձևավորման ու կատարելագործման մեջ: Լեզուն դիտարկելով որպես հանրամշակութային երևույթ՝ տվյալ դեպքում շեշտադրվում է

լեզվի գործածության սոցիալական հայեցակետը, այն է՝ հասարակական հարաբերությունների լեզվական ցուցիչները, քաղաքավարության նորմերը, ժողովրդական իմաստության արտահայտությունները և այլն: Դարերի ընթացքում կուտակված ժողովրդական իմաստության այս «գոհարների» իմացությունը համարվում է «հանրամշակութային իրազեկության լեզվաբանական հայեցակետի կարևոր բաղկացուցիչ մասը» (MCER 117), որը մեծապես խթանում է ուսանողների ճանաչողական ու ստեղծագործական գործունեությունը: Յետաքրքիր է նշել, որ «Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ»-ում այս խնդրի լուսաբանման համար որպես օրինակ ներկայացվում է իրատական ասույթների կիրառումը պարբերականների խորագրերում՝ ոչ մի անդրադարձ չկատարելով գրական-զեղարվեստական տեքստերում հաղորդակցական տարբեր նպատակադրումներով առաձևերի և ասացվածքների գործածությանը: Եթե կայուն կապակցությունների ուսուցումը, ըստ «Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ»-ի, սկսվում է A1 մակարդակում, ապա առաձևերի ուսուցումը նախատեսվում է լեզվի ուսուցման բարձր մակարդակներում:

Հաղորդակցական իրազեկության կարևոր բաղադրիչներից է լեզվամշակութային իրազեկությունը, որի ձևավորման և զարգացման մեջ ուրույն դեր են խաղում առաձևերն ու ասացվածքները: Աշխարհի առաձային պատկերը աշխարհի լեզվական պատկերի մասն է կազմում, որում արտացոլվում են տվյալ ժողովրդի աշխարհընկալման առանձնահատկությունները: Առաձային ասույթների իմաստային կառուցվածքի կարևոր բաղադրիչներից է ներքին ձևը, որը պարփակում է մշակութաբանական և ազգագրական մեծ տեղեկատվություն (Sevilla): Ազգամշակութային բաղադրիչը կարող է դրսևորվել ոչ միայն առաձևերի ու ասացվածքների առանձին բաղադրիչներում (օրինակ՝ անձնանուններ, տեղանուններ՝ *Muera Marta, y muera harta; Pues Dios nuestro Señor se la dio, San Pedro se la bendiga; Su San Martín se le llegará como a cada puerco; No se ganó Zamora en una hora*), այլ նաև որպես իրադրային կիշներ՝ ազգամշակութային նշույթավորվածություն կարող են ունենալ առաձ-ասացվածքները՝ արտացոլելով ազգային որոշ սովորույթներ, ավանդույթներ և այլն (օրինակ՝ *Buenas son mangas después de Pascua; Iglesia, o mar, o casa real; A cada puerco le viene su San Martín*)՝ այսպիսով ընդլայնելով այս լեզվական միավորների հաղորդակցական-ճանաչողական գործառույթները, իսկ օտար լեզվի դասընթացին՝ միջմշակութային հաղորդակցության հնարավորությունները: Խոսելով լեզվատերկրագիտական իրազեկությունների մասին՝ Եվ. Վերեշչագինը և Վ. Կոստոմարովը նշում են, որ իրատական ասույթներն ազգամշակութային տեղեկատվությունը խտացնում են և՛ որպես ամբողջական, և՛ որպես անդամատված (расчлененный) լեզվական նշաններ (Верещагин и Костомаров 175):

«Դոն Կիխոտ» վեպից քաղված շատ առաձևեր լեզվատերկրագիտական գիտելիքների անսպառ աղբյուր են, ինչպես կարելի է նկատել հետևյալ օրինակում, որում տրվում է սերվանտեսյան ժամանակաշրջանի Իսպանիայի դիպուկ բնութագիրը.

[...] y el que yo digo, dice: **“Iglesia, o mar, o casa real”**, como si más claramente dijera: “Quien quisiere valer y ser rico, siga, o la Iglesia, o navegue ejercitando el arte de la mercancía, o entre a servir a los reyes en sus casas”; porque dicen: “Más vale migaja de rey que merced de señor”. Digo esto, porque quería y es mi voluntad que uno de vosotros siguiese las letras, el otro la mercancía, y el otro sirviese al rey en la guerra, pues es dificultoso entrar a servirlo en su casa; que ya que la guerra no dé muchas riquezas, suele dar mucho valor y mucha fama. Dentro de ocho días os daré toda vuestra parte en dineros, sin defraudaros en un ardite, como lo veréis por la obra. Decidme ahora si queréis seguir mi parecer y consejo en lo que os he propuesto». (Don Quijote, Tomo I, c. XXXIX, 301-302)

Առածների ու ասացվածքների համապատասխանությունների փնտրտուքը թարգմանության՝ որպես միջլեզվական և միջմշակութային հաղորդակցության գործընթացում կարևոր խթան է ուսանողների թարգմանական կարողությունների ու հմտությունների կատարելագործման համար (Sevilla y Quevedo): «Դոն Կիխոտ» վեպը հարուստ նյութ է ծառայում իսպաներենի դասընթացին դարձվածային միավորների (այդ թվում՝ նաև՝ առածների ու ասացվածքների) թարգմանության հմտություններն ու տեխնիկան կատարելագործելու համար՝ հիմնվելով վեպի հայերեն տարբեր թարգմանությունների վրա: Կարելի է առածային համապատասխանություններ հաստատել ըստ հետևյալ հնարների՝ զուգահեռ համարժեք, սովորական պատճենում, առածային համաբանություն, դիպվածային պատճենում, անհատական-հեղինակային արտահայտություն, թեև իսպանագիտական աղբյուրներում առաջարկվում են նաև թարգմանական այլ հնարներ (Sevilla Muñoz J., Sevilla Muñoz M.; Mellado):

Եզրակացություն

Հարցի ամփոփ քննությունը թույլ է տալիս եզրակացնել, որ իսպաներենի՝ որպես օտար լեզվի դասավանդման մեջ կարևոր դեր են խաղում առածներն ու ասացվածքները, թեև այս խնդրի շուրջ տեսական մի շարք դրույթներ դեռևս չեն դարձել սպառնիչ քննության առարկա: Առածային ասույթները բառապաշարի հարստացման կարևոր աղբյուր են, որոնք ավելի են ընդգծում խոսքի տրամաբանական հայեցակերպը և հուզական-ոճական արտահայտչականությունը: Ուսուցման ընթացքում առածներն ու ասացվածքները մեծ նշանակություն ունեն ոչ միայն լեզվաբանական (հատկապես՝ բառապաշարային), այլ նաև հանրալեզվաբանական, լեզվամշակութային, ինչպես նաև թարգմանական իրազեկությունների ձևավորման ու զարգացման մեջ: Դրա հետ մեկտեղ ակնհայտ է առածների ու ասացվածքների նվազ ներգրավվածությունը իսպաներենի՝ որպես օտար լեզվի տարբեր դասագրքերում, որն էլ խոչընդոտում է այս խրատական ասույթների ընդգրկմանն ուսուցման գործընթացում: Հաշվի առնելով վերջիններիս բառային-իմաստային, ձևաբանական-շարահյուսական առանձնահատկությունները՝ հարկ է կարևորել դրանց ակտիվ ներառումը ուսուցման բարձր մակարդակներում, հատկապես թարգմանիչների ու բանասերների համար նախատեսված դասընթացներում, որը կարող է մեծապես նպաստել ուսանողների խոսքային կարողությունների զարգացմանը և միջմշակութային փոխըմբռնմանը: Առածներն ու ասացվածքները ուսուցման գործընթացում ներգրավելիս մեծ դեր է կատարում համատեքստը, քանի որ լինելով իրադրային կիշներ՝ վերջիններիս գործաբանական ներուժն առավել ցայտուն ձևով բացահայտվում է իրական հաղորդակցական իրավիճակում:

Օգտագործված գրականություն

1. Верещагин Евгений и Костомаров Виталий. Язык и культура: лингвострановедение в преподавании русского языка как иностранного. М.: Русский язык, 1976.
2. Назарян, Арманд. Фразеология современного французского языка. М.: Высшая школа, 1987.
3. Пермяков, Григорий. Основы структурной паремиологии. Изд-во «Наука», 1988.
4. Barbadillo de la Fuente, María Teresa. "Presupuestos didácticos para la enseñanza de los refranes a través de El Quijote." *Paremia*, 15, 2006, pp. 141-150.
5. ---."Modelo de contribución al mínimo paremiológico de la lengua española con refranes contenidos en el Quijote." *J. Sevilla Muñoz; M.ª T. Zurdo; C. Crida (eds.). Estudios paremiológicos. I. La investigación paremiológica en España. II. El Quijote y los refranes.* Madrid: Ta kalos kéimena, 2008, pp. 29-38.

6. Cantera Ortiz de Urbina, Jesús; Sevilla Muñoz, Julia; Sevilla Muñoz, Manuel. *Refranes, otras paremias y fraseologismos en Don Quijote de la Mancha*. Editado por Wolfgang Mieder. Burlington: The University of Vermont, 2005, pp. 29-36. En línea: *Biblioteca fraseológica y paremiológica* (Documentos): https://cvc.cervantes.es/lengua/biblioteca_fraseologica/documentos.htm
7. Cervantes, Miguel de. *El ingenioso hidalgo don Quijote de la Mancha*. Tomo I. La Habana: Editorial de Arte y Literatura, 1974.
8. ---. *El ingenioso hidalgo don Quijote de la Mancha*. Tomo II. La Habana: Editorial de Arte y Literatura, 1974.
9. ---. *Rinconete e Cortadillo, con testo originale a fronte* (traduzione di Marta Icolari). Milano: Leone Editore, 2014.
10. Marco común europeo de referencia para las lenguas: aprendizaje, enseñanza, evaluación (MCER). Madrid: Ministerio de Educación, Cultura y Deporte, 2002.
11. Mellado Blanco, Carmen. "Parámetros específicos de equivalencia en las unidades fraseológicas (con ejemplos del español y el alemán)." *Revista de filología*, 33, 2015, pp. 153-174.
12. Sardelli, Maria Antonella. "Los refranes en la clase de ELE." *Didáctica. Lengua y Literatura*, vol. 22, 2010, pp. 325-350.
13. Sevilla Muñoz, Julia. "El valor etnográfico del refrán." *Cuadernos de etnología de Guadalajara*, 36, 2004, pp. 307-320.
14. Sevilla Muñoz, Julia y Cantera Ortiz de Urbina, Jesús. *Pocas palabras bastan: vida e interculturalidad del refrán*. Segunda Edición. Salamanca: Diputación de Salamanca, Centro de cultura tradicional Ángel Carril, 2008.
15. Sevilla Muñoz, Julia y Quevedo Aparicio, Teresa. "Didáctica de la traducción al español de paremias francesas." *Didáctica: Lengua y Literatura*, 7, 1995, pp. 133-148.
16. Sevilla Muñoz, Julia y Sevilla Muñoz, Manuel. "Técnicas de la "traducción paremiológica" (francés-español)." *Proverbium*, 17, 2000, pp. 369-386.
17. Zurdo Ruiz-Ayúcar, María Teresa y Sevilla Muñoz, Julia. *El Mínimo paremiológico: aspectos teóricos y metodológicos*. Instituto Cervantes (Centro Virtual Cervantes. Biblioteca fraseológica y paremiológica, serie «Mínimo paremiológico», n.º 1). Madrid, 2016.

Works Cited

1. Vereshchagin, Yevgeniy i Kostomarov, Vitaliy. *Yazyk i kul'tura: lingvostranovedeniye v prepodavanii russkogo yazyka kak inostrannogo*. Moskva: Russkiy yazyk, [Language and culture: linguistic and cultural studies in the teaching of Russian as a foreign language. Russian Language] 1976.
2. Nazaryan, Armand. *Frazeologiya sovremennogo frantsuzskogo yazyka*. Moskva: Vysshaya shkola, [Phraseology of the modern French language. Moscow: Higher School] 1987.
3. Permyakov, Grigoriy. *Osnovy strukturnoy paremiologii*. Moskva: Nauka, [Fundamentals of structural paremiology. Publishing house "Science"] 1988.
4. Barbadillo de la Fuente, María Teresa. "Presupuestos didácticos para la enseñanza de los refranes a través de El Quijote." *Paremia*, 15, 2006, pp. 141-150.
5. ---. "Modelo de contribución al mínimo paremiológico de la lengua española con refranes contenidos en el Quijote." *J. Sevilla Muñoz; M.ª T. Zurdo; C. Crida (eds.). Estudios paremiológicos. I. La investigación paremiológica en España. II. El Quijote y los refranes*. Madrid: Ta kalos kéimena, 2008, pp. 29-38.
6. Cantera Ortiz de Urbina, Jesús; Sevilla Muñoz, Julia; Sevilla Muñoz, Manuel. *Refranes, otras paremias y fraseologismos en Don Quijote de la Mancha*. Editado por Wolfgang Mieder. Burlington: The University of Vermont, 2005, pp. 29-36. En línea: *Biblioteca*

fraseológica y *paremiológica* (Documentos):
https://cvc.cervantes.es/lengua/biblioteca_fraseologica/documentos.htm

7. Cervantes, Miguel de. *El ingenioso hidalgo don Quijote de la Mancha*. Tomo I. La Habana: Editorial de Arte y Literatura, 1974.
8. ---. *El ingenioso hidalgo don Quijote de la Mancha*. Tomo II. La Habana: Editorial de Arte y Literatura, 1974.
9. ---. *Rinconete e Cortadillo, con testo originale a fronte* (traduzione di Marta Icolari). Milano: Leone Editore, 2014.
10. Marco común europeo de referencia para las lenguas: aprendizaje, enseñanza, evaluación (MCER). Madrid: Ministerio de Educación, Cultura y Deporte, 2002.
11. Mellado Blanco, Carmen. "Parámetros específicos de equivalencia en las unidades fraseológicas (con ejemplos del español y el alemán)." *Revista de filología*, 33, 2015, pp. 153-174.
12. Sardelli, Maria Antonella. "Los refranes en la clase de ELE." *Didáctica. Lengua y Literatura*, vol. 22, 2010, pp. 325-350.
13. Sevilla Muñoz, Julia. "[El valor etnográfico del refrán](#)." *Cuadernos de etnología de Guadalajara*, 36, 2004, pp. 307-320.
14. Sevilla Muñoz, Julia y Cantera Ortiz de Urbina, Jesús. *Pocas palabras bastan: vida e interculturalidad del refrán*. Segunda Edición. Salamanca: Diputación de Salamanca, Centro de cultura tradicional Ángel Carril, 2008.
15. Sevilla Muñoz, Julia y Quevedo Aparicio, Teresa. "Didáctica de la traducción al español de paremias francesas." *Didáctica: Lengua y Literatura*, 7, 1995, pp. 133-148.
16. Sevilla Muñoz, Julia y Sevilla Muñoz, Manuel. "Técnicas de la "traducción paremiológica" (francés-español)." *Proverbium*, 17, 2000, pp. 369-386.
17. Zurdo Ruiz-Ayúcar, María Teresa; Sevilla Muñoz, Julia. *El Mínimo paremiológico: aspectos teóricos y metodológicos*. Instituto Cervantes (Centro Virtual Cervantes. Biblioteca fraseológica y paremiológica, serie «Mínimo paremiológico», n.º 1). Madrid, 2016.

PROVERBS AND SAYINGS IN THE TEACHING PROCESS OF SPANISH AS A FOREIGN LANGUAGE

HASMIK BAGHDASARYAN

*Yerevan State University, Faculty of European Languages and
Communication, Chair of Romance Philology, Head,
Doctor of Philology, Associate Professor,
Yerevan, Republic of Armenia*

The present article aims to study the role of proverbs and sayings in the teaching process of Spanish as a foreign language. The "Don Quixote" novel of Cervantes plays an important role in the Spanish paremiology didactics and can be viewed as a literary collection of proverbs and sayings. Based on proverbs and sayings of this novel, the article suggests several didactic activities that can be implemented in the teaching process of Spanish. The role of the context is also given importance in this regard, as the pragmatic potential of the proverbs and sayings as situational clichés is most evident in the communication processes.

The study was carried out on the basis of both universal scientific methods of cognition and various principles of scientific-pedagogical research which derive from the peculiarities of the investigated material.

A brief study of the issue leads to the conclusion that the inclusion of the proverbs and sayings from “Don Quixote” in the teaching process of Spanish as a foreign language can play an important role in the development of the linguistic and sociocultural competences as well as in the formation and development of translation skills and abilities of the students.

Keywords: *proverbs and sayings, Spanish language, teaching process, didactics, activities, linguistic competence, sociocultural competence, translation skills.*

ПОСЛОВИЦЫ И ПОГОВОРКИ В ПРОЦЕССЕ ОБУЧЕНИЯ ИСПАНСКОМУ ЯЗЫКУ КАК ИНОСТРАННОМУ

АСМИК БАГДАСАРЯН

*заведующая кафедрой романской филологии
Ереванского государственного университета,
доктор филологических наук, доцент
г. Ереван, Республика Армения*

Целью данной статьи является изучение роли пословиц и поговорок в процессе обучения испанскому как иностранному языку. Роман Сервантеса «Дон Кихот» играет важную роль в дидактике испанской паремииологии и может рассматриваться как литературный сборник пословиц и поговорок. В статье предлагается ряд дидактических заданий, которые основаны на пословичных изречениях этого романа и которые могут быть использованы в преподавании испанского языка. В этом плане также придается большое значение той роли, которую играет контекст, поскольку прагматический потенциал пословиц и поговорок как ситуативных клише наиболее очевиден в коммуникативных процессах.

Исследование проводилось как на основе общенаучных методов познания, так и различных принципов научно-педагогических исследований, которые исходят из специфики исследуемого материала.

Краткое изучение проблемы позволяет сделать вывод о том, что включение пословиц и поговорок из романа «Дон Кихот» в процесс обучения испанскому как иностранному языку может сыграть важную роль в развитии лингвистических и социокультурных компетенций, а также в формировании и развитии переводческих навыков и способностей студентов.

Ключевые слова: *пословицы и поговорки, испанский язык, учебный процесс, дидактика, задания, лингвистическая компетенция, социокультурная компетенция, переводческие навыки.*